

ՀԱՐԻՄԱ

29

ԱՅԾԱՐԱԾ

ՄԱՐԿՈՆ



ՊԵՏԼԵՍ ԶԵՐԵՎԱԴՆ 1928

Լույս է տեսնում ՀՍԽՀ ԼժԿ Սոցդաստիտուցիայի կից գործող մանկական գրականության Հանձնաժողովի հավանությամբ.



Հ. 696

Գրառեպլար № 571 ք.

Պ. 282

Տիրաժ 3000.

Յերևան Պետրատի Բ. տպարան —



ԱՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐԿՈՆ



5818
A
1881

Ախպեր, դրուստ վրը գյուղացիք ճիշտ են ասում, թե բանուկ ճանապարհի վրա պետք է դուրս գալ: Թե չե՛՝ ետանդ վո՛չ գյուղ ե չերևում, վո՛չ ել ճար ու ճամպա:

— Յես ել եմ կարծում, ընկեր հրամանատար: Բա մարդիկ ողի միջով հո՛ չեն թռչում: Ետանդ վոր գյուղ լիներ, ենա ճամպա յել կլիներ ելի, — բարձրահասակ ու խուճուճ մազերով մի կարմիր բանակալին պատա:խանեց զնդի հրամանատարին:

— Ապա մի ինձ լսիր, ընկեր կոմիսար, — ասաց հրամանատարը, — մեկ ել յետ չդառնանք մինչև այն գյուղը, վորտեղ առաջ ելինք, թե չե՛՝ կվորովենք — կմնանք: Բայց ժամանակ ե, վոր դիվիզիային հասնենք: Շատ յետ ենք մնացել:

Գնդի կոմիսարը ձին հրամանատարի ձիուն հասցրեց:

— Լավ, յես դեմ չեմ: Միայն թե կարծում եմ, վոր այստեղ բոլորս ել պիտի մի քիչ հանգրստանանք և մի բան ուտենք:

— Հարկավոր ե հանգստանալ: Մանավանդ ձիերին, մեջ մտավ խուճուճ մազերով Մարտիկը, — առանց հանգստանալու ճամպա չենք կտրի:



— Հենց այստեղ ել իջնենք: Այ, հրեն են-
տեղ փոքրիկ լիճը շողշողում ե: Ահ, ինչ սի-
րուն ե:

Հեհերին քշելով՝ առաջին ձիավոր բանակը
շատ եր հեռվացել: Ոտար, անծանոթ տեղեր
եր ընկել: Սահմանն անց եր կացել այն
կողմը: Հենց ետ մոտերքում ել լեհերը շրջում
եյին: Բավական եր, վոր զորամասերից մեկն
ու մեկը չետ մնար, նստեր հանգստանալու, ը-
պեյական՝ մեկ ել տեսար ծլեցին: Սկսեցին մո-
տենալ: Բանակը հեռու գնալուն, թիկունքից
կտրվելուն պես լեհերն իսկույն յետևից խփում
զմացնում եյին:

Տեղերն անծանոթ են: Փալիցիայի գյուղա-
ցիներն աղքատ են և լեհերը նրանց լավ թափ
են տվել: Պարեն չի ճարվում: Չիերը նորից ձե-
ռաց գնում են: Իսկ բուզյոնովցիների համար
ձին առաջին տեղն ե բռնում: Նա իր բերանից

կկտրի, բայց ձիու համար վոնց վոր լինի կճարի,
վորովհետև առանց ձիու բանը բուրդ է:

Մինչև ձիերը ջրեցին և իրենք ել լողացան,
սկսեց մթնել: Խիտ ու կապույտ անտառի յե-
տևն արեը մայր եր մտնում և յերկար սավեր-
ներն ընկնում ելին այն մարզագետիններին, ուր



մարտիկներն ելին իջել: Շուտով փոքրիկ հար-
մոնիկն սկսեց ճղճղալ, ներդաշնակ դոփեցին

մեկի վտարերը, վոր չգիտեցին թե հանգստու-
թյունն ինչ բան է:

Բոքոնները ձեռքից ձեռք ելին անցնում:
Մսե պահածոների թիթեղե ամանները շրխկալով
բացվում ելին: Կուզեցին տաք բան ուտել, բայց
հրամանը լսեցին ու կրակ չարին, այլ չոր-չոր
կերան:

— Այ թե մի շիլա լիներ հա՛, լազաթ կտար,
տաք-տաք, մի թիզ յուղը չերեսին:

— Շիլեն ինչ պիտի անես... ա՛նտառի հո-
տը քաշի շիլ տեղը կբռնի:

— Յա թե չե մի չայ լիներ, — շարունակեց
նույն ձայնը, վոր շիլայի մասին եր խոսում:

— Այ, գյուղ: Չայից լավ է, զնա՛ խմիր
Ուտելուց հետո պառկեցին գետնին ու հան-
գիստ խռվում ելին: Իսկ հարմո իկը հագիվ
հազ ճղճղացնում եր: Մարտիկներից մեկը հան-
կարծ վեր կացավ ու սկսեց ականջ զնել:

— Հլա կացեք, տղեք, կասեք՝ թպրտոց է
գալիս:

— Դրուստ վոր թպրտոց է:

— Կարծես իլիսի ըլի, իլիսի (ձիերի ջոկ):
Հարմոնիկ ածող մարտիկը վզակիթին մի
հատ կերավ, ու հարմոնը ցավազին զնգաց ու
ձենը կտրեց:

Մարտիկները տեղերից թռան: Մարաղ մը-
տան: Ականջ են զնում: Իսկ դոփյունն արդեն
պարզ լսվում է ու կարծես զնալով մոտենույ
դիվում է, թե ինչ վոր պար յեկողներ մար-
տիկներին շրջապատել և ուրախ պար են բռնել:

— Հեծեք.

— Հեծե. եք:

Մի ակնթարթում բոլորը թռան թամբերին: Խրտնած ձիերն ականջները խլշած՝ դողում են: Դոփյուռնի հետ քամին բերում է նաև ուրիշ ձայներ, վոր վոչ յերեխայի լացի չեր նմանում, վոչ ել չտեսնված գործիքի ձայնի: Յեվ այդ ձայներն այնքան տարորինակ ու սարսափելի յեն, վոր մարտիկների շունչը կարվում, սիրտը զըցում ե:

— Չլինի՞ թե լեհեր են, — մի տեսակ վրատահոյ են թոչում ե վարտիկներից մեկի շըթունքներից:

Լեհեր — լավ ենք ճանաչում — վախենալու չի: Իսկ այս անձանոթ, անհասկանալի բանը, այն այն ե չերկյուղալի:

Մարտիկներն իրար գլխի հավաքվեցին. սրբերը զրնգացին ու հանկարծ...

Յերկար շապիկով, սպիտակ ու յերկար շալվարով, մի փոքրիկ մարդ դուրս թռավ մարգագետին, իսկ նրա յետևից ինչ վոր մոխրագույն սև ու սպիտակ մի ամպ...:

— Վն ձեք տունը շեն, հն, եծ են, եծ, — գոռացին մարտիկներն ու սրերն իսկույն իջեցրին:

— Տո եծ են, եծ, — անցավ շարքից շարք:

Հրհոցը հովիտը բռնեց ու տարածվեց հեռո՛ւ, հեռո՛ւ, չորս կողմը և շխշխկոցով արձագանքեց անտառները:

Մարտիկները թեքվելով ձիերի բաշին, այն-

պես եյին վրնջում, վոր ձիերը նրանց տակին խաղողւմ եյին:

Իսկ ժարգագետին դուրս պրծած այծարածը մեխվածի պես մնաց կանգնած ու հետո, կարծես թե մի բանից յախենալով՝ հետապըտուլտ պոկ չեկավ:

— Կանգնիր, փոքրիկ, կանգնիր, գոչեց զնդի հրամանատարը:

— Ո՛ւմ տղան ես:

— Մորուց-մանկուց եժ եմ արածացնում:

— Բա անունդ ինչ ե:

— Մարկո: Բա քոնը:

— Ի՞նչ, — ծիծաղեց հրամանատարը. — Սի-մոն. ծանոթներ ենք դառնալու:

Մարտիկներն ել չորս կողմից ծիծաղեցին ու քնքշությամբ նայեցին տղային:

— Մեզ ել ճանաչո՞ւմ ես, թե ո՞վ ենք, նորից հարցրեց հրամանատարը:

— Սալդաթ եք:

— Իսկ ինչ սալդաթ ենք:

Փոքրիկ այծարածն ուշի-ուշով նայեց մարտիկներին ու պատասխանեց:

— Ի՞նչ իմանամ:

— Բուդյոնովցիներ ենք, լեհերի դեմ ենք կռվում:

Այծարածի աչքերը վառվեցին:

— Իսկ դու Բուդյոնին ես, — հարցրեց նա, վտաքն առաջ դնելով:

— Յե՛ս, չե՛, յես նրա աղաշնեմ (անվանակից), — պատասխանեց հրամանատարը:

— Բա դու նրա անունը վճռտեղից ես լը-
սել:

— Մեր գյուղում, վճռտեղ, — պատասխա-
նեց Մարկոն ու պատմեց այն ամենը, ինչ
վոր գյուղացիները Բուդյոնու ժասին ելին խո-
սում:

Մարտիկները լսում, գոհ ժպտում էին և,
վերջապես, մեկը պաշուսակը փնտռեց լով, չորս
տակ ծայած մի լրագիր հանեց:

— Ուզո՞ւմ ես Բուդյոնուն տեսնել, — հարց-
րեց այծարածին:

— Ե՛-ե՞՞ք, ընե՛նց, — պատասխանեց Մար-
կոն ու դեպի մարտիկը շարժվեց:

— Դե ետեղ նայիր:

Մարտիկը լրագիրը բաց արեց ու կռանա-
լով տղային տվեց:

Հենց առաջին չերեսից այծարածին նայեց
հաստ բեխերով ու խորամանկ աչքերով մի դեմք:

— Հլա տես, ե: Պստիկ ե, տո:

— Պստիկ ե, բայց ճստիկ ե, — ուրախ բացա-
զանչեցին մարտիկները:

— Ի՞նչ կասեք, ընկեր հրամանատար, չը-
քշե՞նք այս գյուղը: Գյուղացիներից համ բա-
նուկ ճանապարհը կհարցնենք-կիմանանք, համ
ել տաք բանը ման կուտենք, — ասաց զնդի կո-
միսարը:

— Լավ ես ասում, — պատասխանեց հրամա-
նատարը ու դարձավ Մարկոյին:

— Դե ապրիս, կարո՞ղ ես մեզ տանել ձեր
գյուղը:

— Ինչո՞ւ չեմ տանիւ կտանեմ — ուրախ բա-
ցագանչեց փոքրիկ այծաբաժը:

Միզողն գյուղն իր նման փոքրիկ ու աղ-
քատ գալիցիական գյուղերից հեռու չեր ըն-
կած: Կարծես պոկ եր չեկել այդ գյուղերից ու
պոկ գալուց հետո՝ խորդ ու բորդ ճանապարհ-
ներով գլորվելով—կանգ ե առել այն ժամանակ
միայն, չերբայլ ես գլորվելու տեղ չկար:

Մի կողմից կիսաբոլոր գետն եր, իսկ մյուս
սից՝ խիտ անտառները:

Աղքատ եր գյուղը, աչնքան աղքատ, վոր
հարկահանները կամ մտրակով, կամ մահակնե-
քով, իսկ չերբեմն ել գենքի ուժով ելին թագա-
վորի համար վերջին փշրանքները դուրս բաշում:

Դժվար եր Միզողիին մոտենալ: Բայց հար-
կահանները թեև վոչ հաճախ, ելի հենց տարե-
կան մեկ չերկու անգամ քեֆները հարցնում ե-
լին: Տանում ելին վերջին ունեցածը, ստիպում
ելին հյուրասիրել իրենց և աչքի կտրածն ի-
րենց ելին վերցնում: Իսկ անհնազանդ գյուղա-
ցիներին, այսինքն նրանց, ովքեր տալու բան
չունեյին, բոլորի աչքի առաջ պառկացնում—
ճիպոտով ծեծում ելին, ուչք չդարձնելով թե
նա ծեր ե կամ մանուկ:

Պատերազմի ժամանակ հարկահանները քիչ-
քիչ եյին յերևում, իսկ տասնիննը թվին ել բո-
լորովին չեկան:

Գյուղացիներն սկզբում զարմանում եյին,
բայց հետո լսեցին, վոր ոռւսներն ինչ վոր մի
հեղափոխութիուն են սարքել, թագավորին ու

կալվածատերերին գցել են, ստրաժնիկներին և ուրյադնիկներին քշել են ու ամբողջ հողը մնացել է գյուղացիներին:

Հետո չեւ լուր տարածվեց, թե լեհերը ոռւսների վրա կռիվ են չեկել, վոր լեհերն ուղուժ են թագավորին նորից իր տեղը դնել, վորովհետև վախենում են, վոր ոռւս գյուղացիների ու բանվորների նման լեհ գյուղացիներն ու բանվորներն ել հանկարծ նույն բանն անեն:

Ուստի, աջնուհետև ել վոչ վոք չեք գալիս Միգոչ հարկ հավաքելու, վորովհետև գլուխները խառն եր: Կռիվը Գալիցիա չեւ հասավ:

Գյուղացիներն ասում ելին, վոր «միլիոն ձիավոր գորք ունեցող մի ատաման գնում է լեհերի վրա, և այդ ատամանի անունը Բուդայոնի չե, մի շատ ուժով ել մարդ է, չերեք արշին ըոյ (հասակ) ունի: Բա տակի ձին— չափ չունի: Յեվ չերբ Բուդայոնին կովի յե դուրս գալիս, լեհերի թողը չի չերևում: Իսկ լեհերին թիվ ու համար չկա, մեկի տեղը չերկու հարյուրն է գալիս»:

Այսպես խոսելով՝ անհամբեր լուրեր ելին սպասում լեհերի հետ տեղի ունեցող կռիվներից ու վախենում ելին՝ չլինի թե լեհերը ճանապարհից իրենց գյուղն ել մտնեն, վորովհետև լսել ելին, վոր լեհերը գյուղացիներին չեն խնայում— ձեծում, թալանում, սպանում են:

*
* *

Կարմիր բանակալիներին գյուղացիներից ամեն մեկը մի տեսակ դիմավորեց, վոմանք ան-

վատահուլթյամբ ու վախենալով, վոր «զինվորները» կսկսեն անկարգություններ անել, վերջին կտոր հացը կխլեն ու ձին կտանեն: Մյուսները, մանավանդ ավելի յերիտասարդներն, իրենք ելին կանչում իրենց խրճիթները, կճճում յեղածը սեղանին զնում և առանց կշտանալու հարց ու փորձ անում հեղափոխությունից, այն մասին, թե ինչպես են թագավորին գցել, հարցնում ելին այն կարգերից, վոր այժմ բանվորներն ու գյուղացիներն են մտցրել: Ամենից շատ հետաքրքրվում ելին այն բանով, թե ճիշտ է, արդյոք, վոր գյուղացիներին հող են տվել: Յե՛վ չերբ կարմիր բանակայինները նրանց հավատացնում ելին, թե ճիշտ է, նրանք հառաչում ելին.

— Ա՛խ, ո՛ւր եր, եղպես մի բան ել մեզ մոտ լիներ:

— Ի՛նչ կա վոր, լեհերին կջարդենք, ձեզ մոտ ել նույն բանը կլինի, — ասում ելին կարմիր բանակայինները:

— Իսկ կարող եք ջարդել: Ասում են՝ նրանք շատ են:

— Մենք ել քիչ չենք: Ով ուզում է պատահի, մեր հրամանատար Բուդյոնու հետ ջարդ ու փշուր կանենք:

— Հետո, բա լեհ զինվորներն ինչացո՞ւ յեն: Լեհ զինվորը չգիտե, թե ինքն ինչի համար է կռվում: Քշել են, նա յել չեկել է: Իսկ մե՛ք կռվում ենք և գիտենք, թե ինչի համար. մեր բանվորա-գյուղացիական պետության համար ենք կռվում:

Գյուղացիներն ականջ ելին դնում: Կա-
նայք անդադար կերակուր ելին լցնում, խմո-
րեղեն բերում:

Այժարած Մարկոն տը ից-տուն եր. անցնում,
շեմքին մոտ կանգ առնում ու ականջ եր դնում:



կոչտ ու սևացած դեմքերով մարտիկները նրան դուր ելին գալիս: Դուր եր գալիս նրանց ուրախ ու համարձակ խոսելը: Դուր ելին գալիս ձիերը, վորո՞ց աչճքան լավ ու սիրով հոգ ելին տանում մարտիկները:

Նրան ամեն տեղ սիրով ընդունում, սեղան ելին նստեցնում: Իսկ մարտիկները նրա հետ կատակներ ելին անում, համոզում ելին նրան, վոր այժմ ըրից ձեռք քաշի, իրենց հետ լեհերին կոտորելու գնա:

— Կգալիր մեզ հետ, ելի,—ասում ելին նրանք,— ինչ ես լիծերի պոչը բռնել: Մեզ մոտ քեզ պես պատլաներ ենքան կան:

Բայց Մարկոն համառ կերպով գլուխը թափ եր տալիս ու չիր համաձայնում:

— Հը՛, լեհերից վախենում ե՞ս — ծիծաղում ելին մարտիկները: Վոչ: Մարկոն, լեհերից վախցողը չի: Գայլից ու արջից ել նա չի վախենում: Միայն...

Մի սն թե սիրտն այժերից, անտառներից ու լճերից չի կտրվում: Նա սիրում ե այդ բոլորը, ընտելացել ե այդ բոլորին: Ի՞նչը խաղաղ մարդ ե. սիրում ե, վոր իր որն ել խաղաղ անց կենա: Իսկ այնտեղ կրակում, կովում են: Այնտեղ ազմկալի յե, մարդ շատ կա:

Վոչ: Լավ ե Մարկոն այստեղ, այս լուռ ու խաղաղ Միզոչում մնա:

Կարմիր բանակալիները կես որ մնացին այնտեղ ու գնացին:

Գլուղացիները նլ անց ճանապարհ դրին

մինչև գլուղից դուրս գալը, իսկ Մարկոն իր
այծերի հետ ե՛լ ավելի հեռու, համարյա թե
մինչև բանուկ ճանապարհը գնաց:

Այնտեղից հրաժեշտ ավին ու Մարկոն
կանգնած չերկա՛ր նստում էր, թե ինչպես են
վերջին շարքերն անցնում: Այնքան նայեց, մին-
չև վոր փոշու թանձր բուլաները բոլորովին
ծածկեցին ճանապարհը:

Այդ ժամանակ միայն Մարկոն վերադարձավ
ու նորից դեպի իր անտառներն ու լճերը գնաց:

*
* *

Վեց որ անց եր կացել: Գլուղացիները չերկար
ժամանակ մտաբերում ելին մարտիկները խոսակ-
ցություններն ու վորոշեցին՝ կռիվը վերջանալուն
պես մարդուղարկեն Մոսկով վոր աչքովը տեսնի և
ականջովը լսի, թե ինչեր են կատարվում այնտեղ:

Մարկոն այս բանն իմացավ և սկսեց խնդ-
րել, վոր իրեն ել հետները տանեն:

— Հո՛ ձեռաց չգնացինք, անմախ, — պա-
տասխանեցին նրան, բայց թե մերժելը — չմեր-
ժեցին:

Իսկ Մարկոն անտառոտ գառիվալրով մա-
դրլցելիս, կամ լճի ափին պառկած ժամանակ,
շարունակ մտածում ու մտածում էր, թե ինչ-
պես պիտի պատահի, վոր նա Մոսկովը, այդ
հեռո՛ւ, անհասկանալի Մոսկովը տեսնի:

Յե՛վ այսպես միտք անելով՝ նա շատ ան-
գամ ափսոսում էր, վոր չգնաց Բուդյոնովցիներ-
ի մոտ: Չե՛ վոր կռիվը վերջանալուն պես, հա

22751

վանական ե, վոր նրանք ամենից շուտ գնան
Մոսկով: Իսկ հիմա մտիկ արա, վոր գյուղացի-
ների մտքով Մոսկով գնալ անցնի: Յերևի շուտ
չի լինի, ո՛վ գիտե, գուցե չգնան ել:

Բուդյոնովցիների գնալուց յոթ որ հետո մի
փորձանք պատահեց:

Զգիտես թե ինչպես, լեհական մի զորա-
մաս բանուկ ճանապարհից Միդոչ մտավ:

Առավոտը շուտ չհեղան, իսկ կես ուրին ար-
դեն լաց ու կոծը գյուղը բռնել եր: Լեհերը
հենց վոր իմացան, թե ո՛վ եր նրանց հաց տվել
թե չե՛ անխնա, մինչև մահվան դուռը ծեծեցին:

Յեվ կուշտ հայհուելուց ու ծաղրելուց հե-
տո՛ ինչ վոր կարողացան — հետները վերցրին ու
գյուղից հեռացան, սպառնալով՝ մեկ ել վերա-
դառնալ:

Ամեն որվա պես Մարկոն առավոտը շուտ
այծերը տարել և չերեկոյան տուն եր դառ-
նում: Գյուղի հենց կողքին նա մի ծանոթ վոտ-
նաձայն լսեց ու մտածեց՝ «ելի բուդյոնովցի-
ներն են յեկել»:

Նրան դեմ ու դեմ մարդիկ դուրս յեկան,
վոր նույնպես ձի ելին նստած, նույնպես զին-
ված ելին, նույնպես հրացան ունեյին, բայց
սրանց հագուստներն ուրիշ տեսակ ելին ու սը-
րանք լեհերեն ելին խոսում:

«Լեհեր են», — վճռեց Մարկոն և ուզեց
ճանապարհից դուրս գալ:

— Կանգնիր, — լսվեց մի ձայն, — կանգ-
նիր, թե չե՛ կրակեցի, — և ասորճանակի փողը
դեպի Մարկոն դարձավ:

Մարկոն կանգ առավ: Այժմերը խրանեցին —
ճանապարհից դուրս լեկան:



Սպասչի հրամանով զինվորներէից մի քանիսը
թափվեցին հոտի մեջ և այժերի մի յերրորդից
ավելին ջոկեցին:

Իմացան թե չե, վոր Մարկոն Միգոչի գյու-
ղացի հովիվ ե, սպան հայհոյեց.

— Ա՛յ, շուն-շան վորդիք: Են գյուղից ե,
վոր կարմիր բանակայիններին պահել եյին:

Նա ձին մոտեցրեց հովվին, մտրակը թափ
տվեց ու հարվածից կարմիր գոլն ակոսեց Մար-
կոյի գունատ դեմքը:

Հովիվը ճկվեց, ձեռքերը բարձրացրեց, վոր
յերեսը ծածկի: Չորս տակ ծալած թուղթը վաչը
ընկավ նրա շապկի թևից:

Ձինվորներէից մեկը ձիուց թռավ ու թուղթը
վերցրեց:

— Դեսը տուր, — հրամայեց սպան:

Ձինվորը մոտեցրեց:

Սպան սկսեց դանդաղ բոց անել թուղթը:
Արջունը կամաց-կամաց խփում եր նրա յերե-
սը: Մեկ ել, թամբի վրա նա հանկարծ կատա-
ղեց, նրա դեմքը ծռմըռվեց, ուզում եք ինչ վոր
բան ասել և կատաղութունից խեղդվեց: Բեխե-
րավոր մի դեմք լրագրից ուղիղ նրան եք նա-
յում ու խորամանկ աչքերով ժպտում:

— Բուզյոնին՝ Բ. Բուզյոնին, — այսքանը
միայն կարողացավ ասել, — բը-բը-բուզյոն...


Լեհերից մի քանիսն ել ձիերը մոտեցրին
հրան ու շարունակ նայում ելին այնքան ծա-
նոթ և այնքան ատելի դեմքին:

Յերեսը ձեռքերով բռնած՝ Մարկոն կանգ-
նել եր: Նա չտեսավ, թե ինչպէս վերցրին իր
լրագիրը՝ ինչպէս ելին մեկ-մեկ նայում այդ
լրագիրը, ինչպէս կարծրած դեմքերը կատաղի
նայում ելին իրեն, ինչպէս յերեք ձեռք, ասես
հրամանով, ատրճանակների հետ վեր բարձրա-
ցան:

— Թրը՛խկ:

Յերեք ալ շիթեր ներկեցին փոքրիկ ա, ծա-
րած Մարկոյի սպիտակ ու յերկար շապիկը:
Նա բիթ ու բերանը վրտ յեկավ, ապա՝ յետ-յետ
գնաց ու սկսեց դանդաղ-դանդաղ նստել գետ-
նին, և, վերջապես, վալը ընկավ ու այնպէս ել
յերեսը բաց չարեց:


A 8189



A $\frac{1}{8189}$

[034]

K



ԳԻՆԸ 20 ԿՈՊ.